15.04.26 - 17.04.26
10:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճ

Ս.թ. ապրիլի 15-ին՝ ժամը 10:00-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում կմեկնարկի **«Կլիմայի փոփոխություն, արդարություն և մարդու իրավունքներ»** խորագրով միջազգային եռօրյա գիտաժողովը:

Գիտաժողովը կազմակերպում է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը («Գլոբալ կամպուս Կովկասի»)՝ «Գլոբալ կամպուս Կենտրոնական Ասիայի» և Ժան Մոնեի «Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ և անվտանգություն» եվրոպական հետազոտությունների գերազանցության կենտրոնի (DeHuRiS, ԵՈւԿ) հետ համագործակցությամբ «Right Livelihood» հիմնադրամի «Կլիմա և հակամարտություններ. հատուցում և կանխարգելում» ծրագրի շրջանակում:

Գիտաժողովը տեղի կունենա.

- **15.04.2026-ին՝ ժամը 10:00-15:45-ը,**
- **16.04.2026-ին՝ ժամը 9:30-17:00-ն,**
- **17.04.2026-ին՝ ժամը 10:00-15:30-ը:**

Աշխատանքային լեզուներն են հայերենը և անգլերենը՝ համաժամանակյա թարգմանությամբ:

Թեմատիկ ուղղություններն են.

1. Կլիմայի փոփոխություն, շրջակա միջավայրի աստիճանական վատթարացում (դեգրադացիա) և մարդու իրավունքներ

2. Կլիմայական արդարություն, հաշվետվողականություն և կառավարում

3. Կլիմայի փոփոխություն, անվտանգություն և հակամարտությունների կանխարգելում

4. Տարածաշրջանային և միջազգային գործողությունները կլիմայի ոլորտում

5. Միջսերնդային արդարություն և ապագային միտված կառավարում

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am